ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 փետրվարի 2020թվականի N 10-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐԺԱՆՔ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագնու 2013թվականի հունիսի 20-ի, թիվ 7-Ա որոշմամբ հաստատված <<Հայստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասարի գյուղապետարանի աշխատակազմ>>համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության 20-րդ կետի 5-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ս.Թ ապրիլի 13-ի կազմակերպել և անցկացնել վարժանք <<Ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանվածության կազմակերպում և հետևանքների վերացում>> թեմայով:

2. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալ նշանակել Վաղինակ Մկրտչյանին (կախված վարժանքի թեմայից նշանակվում է համապատասխան ոլորտային պատասխանատու):

3. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) Նախապատրաստել և իմ հաստատմանը ներկայացնել վարժանքի անցկացման պլանը (կարգը, հերթականությունը).

2) Կազմել մասնակիցների ցանկը և տեղեկացնել մասնակիցներին իրենց վերապահված գործողությունների վերաբերյալ.

3) Վարժանքի անցկացումից հետո մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել վարժանքի ամփոփաթերթ, վարժանքի ժամանակ ի հայտ եկած թերությունների և դրանց վերացման առաջարկությունների վերաբերյալ:

4. Որոշումը հայտարարել ըստ առընչությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020 թ. փետրվարի 24
գ.Գեղասար

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝
ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«24» փետրվարի 2020 թ.

ՊԼԱՆ
ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Թեմա՝ «Ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում»:

2. Ուսումնավարժության նպատակները՝

- Ստուգել համայնքի ղեկավար կազմի պատրաստականությունը ջրհեղեղների, հեղեղումների և սելավների առաջացման դեպքում:
- Կատարելագործել համայնքի ծառայությունների ղեկավար կազմի հմտություններն ու ունակությունները ԱԻ կանխման և հետևանքների վերացման գործում, ինչպես նաև փոխհամագործակցության միջոցառումներ իրականացնելիս:
- Ստուգել համայնքի արտակարգ իրավիճակներում գործելու պլանի իրատեսությունը:

3. ՈՒսումնավարժության մասնակիցների կազմը՝

Համայնքային կապի և ազդարարման, ինժեներական, բժշկական, տրանսպորտային, առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման միասնական, բույսերի և կենդանիների պաշտպանության, հասարակական կարգի պահպանման, բնակչության հատուկ սպասարկումների, կոմունալ-տեխնիկական, էներգետիկայի և լուսաքողարկման, գազասպասարկման ծառայություններ:

4. ՈՒսումնավարժության անցկացման ժամկետը և վայրը.

ՈՒսումնավարժությունն անց է կացվելու 2020թ. ապրիլի 13-ին՝ Գեղասար համայնքում:

5. ՈՒսումնավարժության անցկացման կարգը.

ՈՒսումնավարժությունն անց է կացվելու 2 փուլով, մեկ օր տևողությամբ:

ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ժամկետը		Մշակվող ուսումնական հարցերը	Ստեղծված իրավիճակը	ՈՒսուցանվողների գործողությունները	ՈՒսումնավարժության ղեկավարի գործողությունները	Միջնորդների գործողություն-ները
Օպե-ռատիվ	Աստղա-բաշխա-կան					
1	2	3	4	5	6	7
<u>Ի փուլ</u> - «Համայնքի բնակչության պաշտպանության համակարգի պատրաստականության բերումը»: **<u>Փուլի տևողությունը</u>** - օպերատիվ ժամանակով 13.04.2020թ. ժամը 09:00-ից մինչև 13.04.2020թ. ժամը 13:00-ն. - աստղաբաշխական ժամանակով 13.04.2020թ. ժամը 09:00-ից մինչև ժամը 13:00-ն:						
ժամը 09:00-ից մինչև 11:00	ժամը 09:00-ից մինչև 11: 30	1. Համայնքի ղեկավարի կազմի և ՔՊ ծառայությունների ազդարարում, հավաք, իրազեկում և խնդրադրում:	Ս. թ. ապրիլի 15-ից մինչև 18-ը մարզում գրանցվել են տեղումներ՝ մեծ մասամբ ձյան տեսքով: Ապրիլի 20-ին ժամը 09:00-ին «ՀՀ ԱԻՆ հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի «ՀՀ Լոռու մարզային ծառայությունից» ստացվել է հաղորդագրություն՝ մարզում օդի ջերմաստիճանի կտրուկ բարձրացման, սպասվելիք հորդառատ անձրևների, ուժեղ քամու և հնարավոր բարդ իրավիճակի ստեղծման վերաբերյալ, իսկ ապրիլի 15-ի լույս 16-ի գիշերը սպասվում է	ՈՒսումնավարժության մասնակիցները ստանալով հավաքի ազդանշան ներկայանում են հավաքի վայր՝ համայնքի կառավարման կետ և մասնակցում խորհրդակցությանը: ՇՈՒ-ի շտաբի պետը զեկուցում է ղեկավարին խորհրդակցությանը պատրաստ լինելու մասին: Ծանոթանում են ստեղծված իրավիճակին, ներկայացնում տվյալներ և առաջարկություններ:	ՇՈՒ-ի ղեկավարը կարգադրում է իրականացնել համայնքի ղեկավար կազմի և ՔՊ ծառայությունների ազդարարում և հավաք: ՇՈՒ-ի շտաբի պետի միջոցով ստուգում է ղեկավար կազմի հավաքի ընթացքը: Ղեկավարը իրազեկում է մասնակիցներին սպասվող իրավիճակի վերաբերյալ: Լսում է առաջարկություններ, գնահատում իրավիճակը և կատարում խնդրադրում՝ ՔՊ ծառայություններին ուժեղացնելու հսկողությունը և դիտարկումները պոտենցիալ վտանգ ներկայացնող տարածք-	Միջնորդները առանձնահատուկ ուշադրություն են դարձնում ազդարարման և հավաքի կազմակերպման սահմանված ժամկետում իրականացման վրա: Ստուգում են ազդարարման սխեմաները:

1	2	3	4	5	6	7
			գետերի վարարում, որի հետևանքով մերձափնյա բնակավայրերում և սելավավտանգ տարածքներում կարող են առաջանալ արտակարգ իրավիճակներ:		ներում:	
ժամը 09:00-ից մինչև 12:30	ժամը 10:30-ից մինչև 12:30	2. Հետախուզության կազմակերպումն ու իրականացումը:	Ս. թ. ապրիլի 13-ին մարզի տարածքում գրանցվել է գետերի վարարում: Ջերմաստիճանի կտրուկ բարձրացման, ինտենսիվ ձնհալի և գիշերը տեղացած հորդառատ անձրևի պատճառով ստեղծվել է արտակարգ իրավիճակ Գեղասար համայնքում: Համայնքում քամիախառն անձրևը, որը հետագայում փոխվեց հեղեղի, վնասել է թվով 18 բնակելի տների տանիքները, կոտրել ապակիները, հեղեղել տնամերձերի ցանքսերը և ծածկել տիղմով, քայքայել անբարեկարգ ճանապարհները, տեղ-տեղ հեղեղել բնակելի տների նկուղային հարկերը, այն լցրել սելավային հոսքերով և ջրաբերուկներով: Համայնքի «Կագուխ» և «Ղռսար» կոչվող սարի լանջերից անձրևային և	Ստանալով հանձնարարություններ ջրհեղեղների, հեղեղումների և սելավների հետախուզության կազմակերպման վերաբերյալ, համայնքի ուժերով տեղերում իրականացնում են վտանգավոր տեղամասերի ուսումնասիրություններ՝ անհրաժեշտության դեպքում կանխարգելիչ միջոցառումներ կատարելու նպատակով: Կազմակերպում են մշտական ընդհանուր հետախուզություն, բնակչության տարահանման շարասյունների երթուղիներում անցանելիությունը ապահովելու նպատակով, հորդառատ անձրևներից առաջացած արտակարգ իրավիճակների հետևանքները պարզելու և վերացման աշխատանքները կազմակերպելու նպատակով: Համայնքում մշտապես իրականացվում են աշխատանքներ՝ իրավիճակի նոր զարգացումները պարզելու ուղղությամբ: Կանխագուշակում են ընթացքի հնարավոր ժամանակաշրջանը, կազմում տնտեսությունների չափի, տեղադրության նկարագիրը, անցկացնում ռիսկի գնահատում, ուսումնասիրում, կազմում հետազոտությունների մասին հաշվետվություններ և տվյալները տրամադրում ՇՈՒ-ի շտաբին:	Կատարում է խնդրադրում ՔՊ ծառայություններին ստեղծված իրավիճակի մասին և հայտարարում է հրամանը հետախուզության կազմակերպման վերաբերյալ: Ղեկավարը գնահատում է հետախուզական խմբերից ստացված տվյալները, և տալիս նոր առաջադրանքներ (միջանկյալներ 1, 2):	Միջնորդները ուսուցանվողներին են հասցնում խաղարկվող իրավիճակը և հետևում նրանց կողմից ընդունված որոշումներին: Օգնում են մասնակիցներին խնդրի յուրացման և պարզաբանման հարցերում, ունկընդրում ուսումնավարժության մասնակիցների որոշումները: Վերահսկում և մեթոդական օգնություն են ցուցաբերում մասնակիցներին:

1	2	3	4	5	6	7
			ձնհալի ջրերը հոսել են փողոցներով, վնասել դրանք և լցվել մոտ թվով 25 տների նկուղային հարկերը: Փամբակ գետի վարարումից վնասվել է մոտ 4-5 հա խոտհարք և վարելահող:	Ստանալով նոր հանձնարարություններ միջանկյալների միջոցով համայնքի ՔՊ ծառայությունները ընդունում են համապատասխան որոշումներ և զեկուցում են կատարված աշխատանքների մասին:		
ժամը 12:30-ից մինչև 13:00	Ի փուլում կատարած աշխատանքների արդյունքների ամփոփում:		Մասնակիցները զեկուցում են Ի-ին փուլում իրենց կողմից կատարած աշխատանքների մասին (ներկայացնում զեկուցագիր):	ՈՒՆԿՆԴՐՈՒՄ և քննարկում է մասնակիցների զեկույցները Ի-ին փուլում կատարած աշխատանքների վերաբերյալ և տալիս գնահատական:	Միջնորդները մասնակցում են ունկնդրմանը և հարցերի քննարկմանը:	
II. ՓՈՒԼ- «Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը»: Տևողությունը՝ - օպերատիվ ժամանակով 13.04.2020թ. ժամը 11:00-ից մինչև աշխատանքների ավարտը. - աստղաբաշխական ժամանակով 13.04.2020թ. ժամը 14:00-ից մինչև ժամը 18:00-ն:						
ժամը 11:00-ից մինչև աշխատանքների ավարտը	ժամը 14:00 մինչև ժամը 16:00	1. Փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.	Իրավիճակը մնում է անփոփոխ:	Ծանոթանում են ստեղծված իրավիճակի և ընդհանրացված հետախուզական տվյալների հետ: Ստանում են հանձնարարություններ ջրհեղեղների, հեղեղումների և սելավների հետևանքների հնարավոր մեղմացման և միջոցառումների կազմակերպման վերաբերյալ: ՔՊ ծառայությունները տեղերում իրականացնում են բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումներ: Համայնքի շտաբը գործողության մեջ է դնում «Գեղասար համայնքի 2020 թվա-	ՇՈՒ-ի ղեկավարը ընդունում է որոշում ջրհեղեղների, հեղեղումների և սելավների հետևանքների հնարավոր մեղմացման, միջոցառումների կազմակերպման վերաբերյալ: Ղեկավարման շտաբը, ըստ իրավիճակի զարգացման պլանի, իրականացնում է իրավիճակի խաղարկում և հրա-	ՈՒՆԿՆԴՐՈՒՄ են ուսուցանվողների զեկույցները: Պարզաբանում են որոշման պահանջները ուսուցանվողներին:

1	2	3	4	5	6	7
				կանի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլան»-ը, կոորդինացնում աղետի գոտում հետևանքների վերացման ուղղությամբ բոլոր գործողությունները: ՈՒսուցանվողները իրենց լիազորությունների սահմաններում սահմանում են աղետի տարածքում բնակչության պաշտպանության համակարգի աշխատանքային ռեժիմները, ուժեղացնում հասարակական կարգի պահպանությունը: Ընդունում են որոշում անհրաժեշտ ուժերի և պատրաստականության բերման վերաբերյալ: Դեպքի վայր են ուղարկում համայնքի ՔՊ կազմավորումները և օպերատիվ խմբերը: Տարահանման հանձնաժողովը իրականացնում է համապատասխան պլանով նախատեսված տարահանման և տարահանվող բնակչության ընդունման հավաքակայանի ծավալման նախապատրաստման աշխատանքներ: Բոլոր ընդունված որոշումների և կատարված աշխատանքների մասին զեկուցում են ՇՈՒ-ի շտաբին: Իրազեկում են վտանգավոր տարածքների կազմակերպություններին ու բնակչությանը, կանխատեսվող հեղեղումների ու սելավների մասին, պարբերաբար տրվում են հաղորդումներ բնակչության վարվելակերպի վերաբերյալ: Բոլոր ընդունված որոշումների և կատար-	կում (միջանկյալներ 3, 4): ՇՈՒ-ի շտաբի պետը նախապատրաստում և ՇՈՒ-ի ղեկավարին է ներկայացնում ՓԱՎԱ կազմակերպման և իրականացման մասին հրամանի նախագիծը, կազմակերպում ՓԱՎԱ իրականացնող ուժերի խմբավորում և վերահսկում աշխատանքների կատարման ընթացքը:	

1	2	3	4	5	6	7
				ված աշխատանքների մասին զեկուցում են ՇՈՒ-ի շտաբին:		
ժամը 11:00 մինչև աշխատանքների ավարտը	ժամը 16:00-ից մինչև 17:30	2. Բնակչության կենսաապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Աղետի գոտում շարունակվում են փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները:	Համայնքի ծառայությունները իրականացնում են տուժած բնակչության կենսաապահովմանն ուղղված միջոցառումներ: Կազմակերպում են աղետի գոտու բնակչության անհետաձգելի բուժօգնությունը, հիգիենիկ հակահամաճարակային և կենսաապահովման միջոցառումների կոորդինացումը, իրականացնում տուժած համայնքի համալիր ուսումնասիրություններ, որոշելով անհրաժեշտ աշխատանքների մոտավոր ծավալները: Այդ արդյունքների հիման վրա կազմում են առաջարկություններ և ներկայացնում ղեկավարությանը:	Ղեկավարը իրականացնում է իրավիճակի խաղարկում և հսկում ուսուցանվողների գործողությունները: Ապահովում է բնակչության կենսաապահովման կազմակերպման միջոցառումների արդյունավետ իրականացումը միջանկյալների միջոցով (միջանկյալներ 5, 6):	Միջնորդները լսում են ղեկավարների կողմից տրված հրամաններն ու կարգադրությունները, հետևում են նրանց աշխատանքներին, պահանջում են ուսուցանվողներից ճիշտ և մասնագիտական գործողություններ, ստուգում և ուսուցանում են նրանց գործողությունների ճշտությունը:
ժամը 17:30-ից մինչև ժամը 18:00	ՈՒսումնավարժության արդյունքների հակիրճ ամփոփում		Ներկայանում են ունկընդրման և ներկայացնում կատարած աշխատանքները:	Անցկացնում է ուսումնավարժության արդյունքների հակիրճ ամփոփում, մատնանշում ուժեղ և թույլ կողմերը, նշանակում թերությունների վերացման ժամկետներ: Հայտարարում է ուսումնավարժության ավարտ:	Զեկուցում են ուսումնավարժության ընթացքում կատարած աշխատանքների մասին, ներկայացնում զեկուցագիր:	

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ